ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Բահիեի Ռոստամ Աֆշարի
«Թեհրանի կենտրոնում ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետանախագծային խնդիրները»
թեմայով ատենախոսության մասին,
ներկայացված ԺԸ 00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ
ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը նվիրված է Թեհրանի ժամանակակից քաղաքային միջավայրում կատարվող փոփոխությունների լույսի ներքո ինքնության պահպանման ճարտարապետահատակագծային խնդիրներին, որոնք վերջին տասնամյակներում մեծ հնչեղություն ու արդիականություն են ձեռք բերել: Այս հիմնահարցերը արդիական են ոչ միայն Թեհրանում, այլ պատմականորեն ձևավորված քաղաքաշինական միջավայր ունեցող բոլոր բնակավայրերի համար, սակայն մինչ օրս բավականաչափ հետազոտություններ այս ոլորտում արված չեն: Մեկ ամբողջական աշխատության շրջանակում այս հարցերի բազմակողմանի համակարգված պարզաբանումը այսօր հրատապ անհրաժեշտություն է, ինչը և որոշում է ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսության շրջանակում կատարված համալիր հետազոտությունները՝ ինչպես միջազգային փորձի, այնպես էլ Իրանի տարբեր բնակավայրերի վերաբերյալ փաստում են, որ վերոնշյալ բնակավայրերում ինքնության պահպանումը կապված է մի շարք խոչընդոտների հետ՝ ուրբանիզացիայի և զարգացման ճնշումների պատճառով: Սա վերաբերում է նաև ատենախոսի կողմից ներկայացվող ատենախոսության դրույթներում տեղ գտած օրինակներին:

Աշխատանքը կենտրոնացած է ոլորտի համալիր վերլուծության հիման՝ ուղեցույցի մշակման վրա: Մեթոդը՝ հիմնվելով համաշխարհային փորձի վրա, ստեղծել համապատասխան փորձառություն: Նորույթը բնագավառի բացահայտումն ու գործիքների վերլուծական հավաքական պատկերի կազմումն է ապա, բնագավառի շուրջ տեղեկատվական և ուսումնական իրազեկության բարձրացումը:

Ուսումնասիրության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ Իրանի մայրաքաղաքի օրինակով կատարվել է նմանատիպ հետազոտություն և մշակվել են ճարտարապետական ինքության պահպանությանն ուղղված մեթոդաբանության ներդրման հիմնական սկզբունքներն ու ուղղությունները:

Նախապաշտպանության ժամանակ աշխատանքի վերաբերյալ ներկայացվել են մի շարք առաջարկներ, որոնք տեղ են գտել վերջնամշակված աշխատանքում:

Կատարվել է լուրջ հետազոտություն, աշխատանքը շարադրվել է նպատակի ու առաջադրված գիտական խնդիրներին համապատասխան: Ատենախոսը ջանասիրաբար ու հավուր պատշաճի ներկայացրել է, որ ինքնության պահպանումը Իրանում, հատկապես մայրաքաղաք Թեհրանում գերակա խնդիր է դարձել արագ ուրբանիզացիայի և քաղաքային միջավայրի չկանոնակարգված արդիականացման պատճառով:

Քանի որ ատենախոսության հիմնական թեման ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետահատակագծային հարցերն են, ատենախոսը Թեհրանի 12-րդ վարչական, պատմականորեն ձևագոյացած շրջանի օրինակով ներկայացրել է խնդիրները, որոնք առնչվում են քաղաքաշինական արդի զարգացման միտումներին, որոնք սպառնում են խաթարել տարածքի պատմական, մշակութային կամ սոցիալական ինքնությունը՝ շրջանի արագ և չկանոնակարգված արդիականացման արդյունքում:

Խնդրի լուծմանը միտված ատենախոսը առաջարկել է մեթոդաբանություն ու գործիքակազմ՝ կանոնակարգելու պահպանության և զարգացման հավասարակշռված քաղաքականության իրականացումը՝ աջակցելու ինչպես տեղական բիզնեսներին, մշակութային միջոցառումների խթանմանը, որոշումների կայացման գործընթացներում ներգարվելով բնակիչներին, այնպես էլ նպաստելով քաղաքի ինքնության պահպանմանը:

Ատենախոսությունում կարևորվել է միջավայրակայուն ճարտարապետությունը, որն ուղղված է շինության բնապահպանական բացասական ազդեցության նվազեցմանը, ինչպես նաև շինանյութերի, էներգիայի և տարածության ռացիոնալ օգտագործմանը՝ էկոհամակարգի արդյունավետ զարգացման համար՝ առաջարկելով ավանդույթի շարունակականության կիրառությունը նաև արդի վերափոխումներում:

Ատենախոսությունը՝ Թեհրանի կենտրոնի 12-րդ պատմական վարչական շրջանի ժամանակակից քաղաքային միջավայրում ինքնության պահպանման ճարտարապետահատակագծային խնդիրներին վերաբերող աշխատանքը, բաղկացած է 149 տեքստային էջից, որն ընդգրկում է ներածությունը, հաջորդող երեք գլուխները՝ համապատասխան եզրակացություններով, ընդհանուր եզրակացությունները, թեմայի հետ կապված 84 անուն օգտագործած գրականության ու հրատարակությունների ցանկից, ինչպես

նաև՝ լուսանկարներ, վերլուծական աղյուսակներ, դիագրամներ, ուրվագծեր, քարտեզներ պարունակող հավելվածներից:

Առաջին գլխում ատենախոսը ներկայացնում է Թեհրանի լանդշաֆտը, աշխարհագրական առանձնահատկությունները, պատմական զարգացման և ճարտարապետական ժառանգության ձևագոյացման փուլերը, քաղաքաշինական համատեքստն ու արդի վիճակը, ինչպես նաև՝ կառուցապատված միջավայրում առկա հիմնախնդիրները:

Երկրորդ գլխում տեսականորեն ներկայացվում է ինքնության կոնցեպտը ճարտարապետության ու քաղաքաշինության համատեքստում, դիտարկելով միջազգային փորձը, ինչպես նաև պահպանման ճարտարապետանախագծային խնդիրները ներկայիս Թեհրանի քաղաքային լանդշաֆտում:

Երրորդ գլխում որպես իրավիճակային դեպք ներկայացվում է Թեհրանի պատմական շենքերով կառուցապատված 12-րդ վարչական շրջանը, որտեղ ինքնության պահպանման համատեքստում դիտարկվում է քաղաքաշինական առանձին բաղադրիչների դերը, պահպանման, վերակառուցման կամ հարմարվողական վերաօգտագործման նշանակությունը ճարտարապետական ժառանգության շարունակականության ապահովման գործընթացում:

Առաջադրվում է նաև քաղաքաշինական գործունեության կանոնակարգմանը միտված չափորոշիչների համակարգ՝ բնակավայրի հետագա զարգացման գործընթացում քաղաքաշինական միջամտությունները ներդաշնակորեն ինտեգրելու ձևավորված միջավայրին, առանց խաթարելու քաղաքային ինքնությունը և ապահովելով շարունակականությունը: Հետազոտության նյութն առավել մատչելի ներկայացնելուն միտված վերլուծական մասում կիրառվել են նաև ԱԲ հնարավորությունները:

Ընդհանուր եզրակացություններում կատարվել է նյութի ընդհանրացում, տվյալների ամրագրում:

Հավուր պատշաճի ներկայացվել է կատարված հետազոտությունը և՛ տեքստային մասում, և՛ հավելվածների բաժնում զետեղված գրաֆիկների, դիագրամների, աղյուսակների, պատկերների միջոցով վիզուալիզացնելով այդ երկուսի համադրումը: Ներկայացված գրաֆիկական նյութը մշակված է բարձր մակարդակով, պարզ և հստակ համակարգված ներկայացնելով թեմային առնչվող պատկերներ:

Աշխատանքի վերաբերյալ կան հետևյալ դիտողություններն ու ցանկությունները.

• Ի տարբերություն գրաֆիկական նյութի, որը շատ պարզ և համակարգված ներկայացված է, ցանկալի կլիներ, որ տեքստային մեծածավալ հետազոտական նյութը նույնպես լիներ համակարգված:

• Աշխատանքում տեղ են գտել որոշ ձևակերպման անճշտություններ:

• Ընդունելով, որ թեման նոր է և քիչ հետազոտված, այնուհանդերձ ցանկալի կլիներ գրականության առավել մեծ ցանկի ներկայացում:

Եզրակացություն

Բահիեի Ռոստամ Աֆշարի «Թեհրանի կենտրոնում ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետանախագծային խնդիրները» ատենախոսությունն իր հիմնական դրույթներով, բավարար չափով արտացոլված է տպագրված 7 հրատարակություններում: Անկախ այն բանից, որ աշխատությունը կատարված է գլխավորապես Թեհրանի 12-րդ վարչական շրջանի համար, այն խիստ կարևոր է և կիրառական քաղաքի ողջ տարածքի, ինչպես նաև այլ բնակավայրերում ներդրման համար:

Հաշվի առնելով վերոնշյալը, գտնում եմ, որ Բահիեի Ռոստամ Աֆշարի ներկայացված «Թեհրանի կենտրոնում ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետանախագծային խնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Բահիեի Ռոստամ Աֆշարը լիովին արժանի է հայցած ճարտարապետության գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՃՇՀԱՀ-ի Ճարտարապետության ֆակուլտետի
դեկանի տեղակալ,
Ճարտ. թեկն., դոցենտ Մ.Յու. Իգիթխանյան

Մ. Յու. Իգիթխանյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար՝
տ.գ.թ., դոցենտ Լ.Հ.Լևոնյան
Լ.Հ.Լևոնյան

7.11.2025թ.